Մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարանի Վ. Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցակացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:
Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝
1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել դրանք:
Փաստաթղթերը ընդունվում են 2023 թ. հունիսի 15-ից մինչև հունիսի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-15:00, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա **2023 թ. հունիսի 30-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի Վ. Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում:
Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Գ. Նժդեհի 20/2:
Տեղեկությունների համար զանգահարել (0252) 2-44-49 հեռախոսահամարով: